

ԱՒԵՏԱԲԵՐ

Հայ Կաթողիկէ ժողովրդապետութիւններու

25 Դեկտեմբեր 2014

ԺԳ. Տարի

Թիւ 44

ՏՕՆ ԾՆՆԴԵԱՆ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՄԻ ՔՐԻՍՏՈՍԻ

ԺԱՍԱՍՈՒՏ

Աստուածածին, քեզ հռչակելով՝ կ'երկըրպագէ ուղղափառ Եկեղեցին, որովհետեւ այն, որուն չէին համարձակեր նայիլ բազմաչեայ քերովբէները, հրանիւթ գահերն ու վեցթելեան սերովբէները, դուն՝ իբր աղախին արգանդիդ մէջ առանց սերմի կրեցիր Տէրը եւ իբր մարդ՝ ծնունդ տուիր բոլորիս Աստուծոյն, քեզմէ մարմին առած անըմբռնելի Բանին, որպէսզի աշխարհի փրկութիւն եւ մեզի կեանք պարգեւէ:



ՃԱՇՈՒ ՇԱՐԱԿԱՆ ԳԿ

Անձս կը փառաւորէ Տէրը եւ հոգիս կը ցնծայ Աստուծամով՝ իմ փրկիչովս:

Մենք օրհնութեամբ կը մեծացուցանենք սուրբ Աստուածածինը:

Աւետաբեր հրեշտակը աւետեց ծնող Փրկիչը սուրբ Կոյսէն:

Ան ըսաւ. «Ուրախացի՛ր շնորհքներով լեցուն, որովհետեւ Տէրը տէրերուն քեզի հետ է»:



ՄԵՍԵՂԻ

(Սաղմոս 2, 7 եւ 1)

Իկքը Տէրը ըսաւ ինծի, թէ դո՛ւն ես իմ Որդիս եւ Ե՛ս այսօր քեզ ծնայ:

Հեթանոսները ինչո՞ւ կը խռովին եւ ինչո՞ւ սնտոյի բաներ կը մտածեն ժողովուրդները:

ԸՆԹԵՐՑՈՒԱԾ

Պօղոս Առաքեալին Տիտոսի ուղղուած Թուղթէն

(Տիտ. 2, 11-15)

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՆ ՅԻՄԵՐԸ

Որովհետեւ Աստուծոյ շնորհքը, աղբիւր՝ մարդոց փրկութեան յայտնուեցաւ եւ մեզի կը սորվեցնէ հրաժարիլ ամբարշտութենէ եւ աշխարհային ցանկութիւններէ, ապրիլ այս աշխարհի վրայ զգաստութեամբ, արդարութեամբ եւ աստուածապաշտութեամբ, սպասելով երանելի յոյսին եւ փառքի յայտնութեան, մեր մեծ Աստուծոյն եւ Փրկչին Յիսուս Քրիստոսի, որ ինքզինք զոհեց, որ փրկէ մեզ անօրէնութենէն եւ սրբացնէ սեփական ժողովուրդ մը՝ Նախանձախնդիր բարի գործերու մէջ: Այսպէս խօսէ՛, յորդորէ՛ եւ յանդիմանէ՛ իշխանութեամբ, որպէսզի ոչ ոք քեզ արհամարհէ:



Ալելուիա, Ալելուիա,

(Ղուկ 2, 11 եւ Սաղմոս 109, 3բ)

Այսօր, Դաւիթի քաղաքին մէջ, ձեզի Փրկիչ մը ծնաւ, որ Օծեալ Տէրն է: Արուսեակը դեռ գոյութիւն անգամ չունէր, երբ ես քեզ արդէն ծնած էի:

Ալելուիա:



ԱՄԵՏԱՐԱՆ

(Ղուկ. 2, 1-7)

ԾՆՈՒՆԴ ՅԻՍՈՒՄԻ ՔՐԻՍՏՈՍԻ

Այն օրերուն, Օգոստոս Կայսրի կողմէ հրամանագիր մը ելաւ, մարդահամար ընելու ամբողջ աշխարհի վրայ: Այս առաջին մարդահամարը տեղի ունեցաւ, երբ Կիւրենիոս կուսակալ էր Սուրիոյ: Ամենքը կ'երթային մարդահամարի, իւրաքանչիւրը իր քաղաքը: Յովսէփ, Գալիլիոյ Նազարէթ քաղաքէն մեկնեցաւ դէպի Զրէաստան, Դաւիթի քաղաքը՝ Բեթղե-

հեմ, որովհետեւ Դաւիթի տունէն ու սերունդէն էր, արձանագրուելու համար իր կնոջ՝ Մարիա մի հետ, որ յղի էր:

Մինչ այնտեղ կը գտնուէին, Մարիամի ծննդաբերութեան ժամանակը հասաւ եւ ծնաւ իր անդրանիկ որդին, փաթեց խանձարուրներով ու դրաւ մսուրին մէջ, որովհետեւ իջեւանի մէջ տեղ չկար անոնց համար:

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՆ

Փառք ի բարձունս Աստուծոյ եւ յերկիր խաղաղութիւն

Փառք ի բարձունս Աստուծոյ եւ յերկիր խաղաղութիւն:

Սուրբ Ծննդեան պատգամն է այս: Այս պատգամը հրեշտակները աւետեցին եւ պիտի աւետեն մարդոց առ յաւետ: Այս է Աստուծոյ կամքը, այսինքն փառաւորել զԱստուած միշտ եւ հաւապագ ու խնդրել խաղաղութիւն աշխարհիս համար:

Յիսուսի Ծնունդը Խորհուրդ մըն է, մեծ եւ սքանչելի: Աշխարհի Փրկիչը եկաւ աշխարհ: Սուրբ Յովհաննէս Մկրտիչ գոչեց: «Ահա գառն Աստուծոյ որ բառնայ զմեզս աշխարհի»: Յիսուս աշխարհ կու գայ բոլորիս փրկութեան համար: Յիսուսի Ծնունդը՝ Քրիստոնեաներուս վրայ կը դնէ մեծ պատասխանատուութիւն մը՝ Սոգերուն երեցած աստղին նման, առաջնորդելու մարդիկ դեպի մտւոր, դեպի Յիսուս: Չէ որ Յիսուս աշակերտներուն ըսաւ՝ «Դուք աշխարհի լոյսն էք»: Մեզմէ շատեր դժբախտաբար կամ կ'անգիտանան եւ կամ կը զլանան այս քրիստոնեական առաքելութիւնը: Մեծ է այս պատասխանատուութիւնը: Մարդիկ՝ կամ կ'ընդունին զհնք որպէս Փրկիչ աշխարհի եւ կամ չեն ընդունիր զհնք: Անոնք որ զհնք պիտի ընդունին, իշխանութիւն պիտի առնեն Աստուծոյ որդիներ ըլլալու:

Մեզի գալու համար, Քրիստոս ինքզինք այնքան նուաստացուց ու պզտիկցուց, որ աղքատ հովիւներէն, Սուրբ կոյսէն ու Սուրբ Յովսէփէն գատ, ոչ իշխանները, ոչ գիտնականները, ոչ ալ այդ օրուայ քահանայական դասը անդրադարձաւ անոր գալուստին: Ան անյայտ ու անծանօթ կերպով մտաւ աշխարհ, մինչ բազմաթիւ մարգարէներ կը ծանուցանէին անոր յաղթական



գալուստը հազարաւոր տարիներ առաջ:

Ինչու այս կերպ գալուստը: Որպէսզի իրականանայ Աստուծոյ Յօր ծրագիրը, սիրոյ ծրագիրը, որ կը յայտնուի աղքատութեան, խոնարհութեան, համեստութեան եւ հեզութեան առաքիւնութիւններուն մէջ: Այս՝ աստուածային կերպ է, բոլորովին տարբեր մարդկային կերպէն: Այս կերպ գալուստն է զոր բացայայտեց Յիսուս, երբ քարոզեց Նոր արդարութիւնը, հռչակեց երանութիւնները եւ երբ ելաւ կարդալու սուրբ գիրքէն, Եսայի մարգարէին այդ հատուածը, ուր գրուած է՝ «Տիրոջ Յոգին վրաս է, որովհետեւ օծեց զիս, առաքեց զիս աւետարանել աղքատներուն» Այս Նոր կերպ գալուստը սքանչելագործ գերբնական պարգէւ մըն է զոր Աստուած տուաւ մարդկութեան: Յի-

սուսի ծնունդը Սուրբ Կոյսէ մը արդէն
նորահրաշ դէպք մըն է. նորութիւն մըն
է, ուր ծնունդը երկնային Մանուկի մը,
կը բերէ հետը նոր կեանք մը աշ-
խարհի, կեանք մը, որ կը գերազանցէ
ու կը գերադասէ ամէն բան զոր մարդ
կրնայ երեւակայել: Այնպէս որ մարդ-
կային պատմութիւնը այնուհետեւ
կ'ունենայ նոր էջ եւ նոր թուական՝

«Քրիստոսէ առաջ եւ Քրիստոսէ վերջ»:
Անոր ծնունդով կը սկսի աշխարհի
պատմութեան նոր էջ մը, ուր աղքա-
տը՝ իշխան կը դասուի եւ փոքրը՝ մեծ:
Կը կառուցուի նոր աշխարհ մը՝ ուր
մեծագոյնը պէտք է ըլլայ կրտսերա-
գոյնը եւ ուր արդարութիւնն ու սերը
ըլլալու են առաջնակարգ օրէնքներ:



Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ - Սուրբ Եղիա Աթոռանիստ Եկեղեցոյ Ժողովրդապետութիւն

Հայերէնի դասընթացք «Հայ եմ ես»

5-էն մինչեւ 12 տարեկան պատանիներուն համար
Ամէն Շաբաթ ժամը 4-էն մինչեւ 5; 10 Յունուար 2015-էն մինչեւ 27 Յունիս 2015,
Ս. Գրիգոր Լուսաւորիչ - Ս. Եղիա Եկեղեցոյ մէջ:

- Արձնագրուողներէն կը պահանջուի կանոնաւոր ներկայութիւն:
- Արձնագրութեան սակ՝ 100\$ ամբողջ դասընթացքին համար:
- Արձնագրութեան սակին մասնակցելու անկարելիութեան պարագային դիմել ժողովրդապետութեան պատասխանատու Վարդապետներուն:

Մանրամասնութիւններու համար՝ Տէր Րաֆֆի Յովհաննէսեան 03/580412
Կամ ժողովրդապետութեան Քարտուղարութիւն 01/987080

Tel.: 01/ 570 559 - Fax: 01/ 570 558 e-mail: eparchy@armeniancatholic.org
www.armeniancatholic.org